

ԷՆԹԵՐՎԻՈՒ

ՄԷՍՏՈՒՀԻ, ԹԱՀՍԻՆԻ ԵՒ ԲԱՄԻՆ ՀԵՏ
(ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵՆՆԵՆ ՍՈՒՋ)

Ներս կը մտնեմ. այս անգամ ո՛չ
այնպէս ինչպէս տարին մէկ քանի անգամ
ծակը թխեցին զիս՝ Տօքթ. Տաղաւար-
եանի փախուստին մասին տեղեկութիւն-
ներ քաղելու համար:

Այս անգամ, իբրեւ լրագրող, էնթեր-
վիտ մը պիտի ընէի կայս. պալատին աւա-
ղակապետ Թահսինը, ծովային նախարար
գոյ Րամին և ներքին գործոց նախարար
այդ հայակեր (տե՛ս Բիւզանդիոնի բաւա-
րանը) կամ հայաստեաց Մէմուհը:

Ներսը երեքը մէկ գլխիկոր, Բաղաւ-
մու հռչակաւոր աւանակին պէս կը մտա-
ծեն. իրենց մարմինը, այդ իւզերու զան-
գուածները գլխերը մեծ յարձակումի մը են-
թարկուած են փայտօլիւններու կողմէ: Մեծ
խանդավառութիւն մը կը տիրէ բանտի...
մուկերուն մէջ, որոնք Հայերու և Ժէճոն
Թիւրքերու նիհար մարմինը կրծելով հո-
գինին ելած էր:

Ներս մտած միջոցիս երեք աւաղակ-
ները քով քովի եկած՝ հաւասարութիւն
և արդարութիւն կը քարոզեն... մուկե-
րու բանակին, որոնք սակայն միշտ կը
յարձակին անոնց ետըլը սրունքներուն
մըայ:

Երբ զիս կը տեսնեն, ամէնքը մէկ
գլխինին վեր կ'առնեն և օգնութիւն կը
խնդրեն ինձմէ: Վայրկեան մը կը խնդրեմ
մուկերէն որ հեռանան եւ մուկերը ասոր
վրայ խորհրդակցութիւն մը կատարելով
առժամաբար կը քաշուին:

Նախ Թահսինի կը մօտենամ.

— Դուք Թահսին փաշան չէ՞ք, նախ-
կին չարքներուն մեծագոյն պատճառը,
հռչակաւոր կաշառակերը, Օրմանեանի մը
տերիմը:

— Այո՛... սակայն.

— Դուք չէ՞ք որ ծովուն տակը կը
ղրկէիք Թուրքերն ու Հայերը:

— Այո՛...:

— Բանի՞ միլիոն գողցաք կառավարու-
թիւնէն:

— Լաւ մը չեմ գիտեր հաշիւը. սակայն
երեք միլիոն մը կայ:

— Ի՞նչ կը յուսաք որ ըլլայ ձեր վախ-
ճանը:

— Յէ՛նիմ փաշայի տառոսին պիտի դաճեմ:
Թահսին փաշա յանկարծ ճիշդ մը կ'ար-
ձակէ. խոշոր մուկ մը իր աղդրին մօտ
մէկ կտորը գողնալով փախած էր:

Կը դառնամ ներքին գործոց նախարար
Մէմուհի, և,

— Բարձրապատիւ Տէր, գո՞հ էք ձեր
այս շքեղ ընտանեկանին:

— Ես նախարար եմ. ես աւագանի եմ
և իրաւունք չունիք զիս ծաղրելու:

— Ո՛հ ոչ, բարձրապատիւ տէր, ըսել
կ'ուզէի թէ ընդունելութիւնը ի՞նչպէս եւ
ղաւ. արժանաւայտ էր:

— Ընդհակառակը. պարզ գողի մը պէս
փողոններով հոս առաջնորդեցին և փա-
կեցին:

— Զի՛շտ է, դուք պարզ գող մը չէ՞ք,
այլ նշանաւոր աւաղակ մըն էք: Գուք զեռ
Սահմանադրութիւնը հռչակուելէն ետքն
ալ երկրէմի հեռագրիւնը զրկեցիք գաւառ-
ները և տակաւին հայ բանտարկեալները
ազատ արձակուած չեն. դո՞ք կաշառա-
կերութեան մարմնացումն էք... դուք
վերջապէս հայերը ջարդելու գործին մէջ
նշանաւոր դեր մը խաղացիք... ձեր ար-
հեստը ի՞նչ էք առաջ:

— Լուսդուս պոյաճութիւն:

— Ո՛ւր տեղացի էք:

— Խաթանպուրցի:

— Սահմանադրութեան տեւականու-
թեանը մասին ի՞նչ գաղափար ունիք:

— Հիմայ այլեւս համոզուած եմ որ
սահմանադրութիւնը վերջնական է... քա-
նի որ մենք ծակը թխուած ենք, փո-
խանակ Հայերուն:

Ամէն.

Կը շարունակ Հասան Րամի փաշային որ
մատնեւուն վրայ հաշիւ 'մը կ'ընէ:



Տղուկները ո՛ւր կը փակին:

Պատրիարքարանի դրան:

Արիս Գեանեան Պատրիարքարանի դրան սըլը սըլը փակած՝ կը պոռայ:

— Հոգիս կ'եղայ, բայց մարմինս ասկէ դուրս չեղար:

— Ի՞նչպէս ձերբակալեցին ձեզ, կը
հարցնեմ:

Ընդոտ քունէն ելողի մը պէս վեր
կը ցատկէ և մոլորուն նայուածքով.

— Հայտը մը պէս. թաղին իմամը, մըլիս-
թարը և պէքճին՝ պաշտօնեաներու հետ
եկան և ձերբակալեցին զիս:

— Ի՞նչ ըրիք այն ատեն:

— Խնդրեցի որ գոնէ հոգ տանին որ-
պէս զի ժողովուրդը «եռնայ» ի չը բռնէ և
չը թքեն երեսն:

— Ի՞նչու...:

— Որովհետեւ ես փաշա եմ:

— Այլ փաշա չընեն այդ բանը, հիմայ
հաւասարութիւն կայ:

Ու լսեցի որ մուկին մէջ ախաները
կը կծորտեցնէր՝ գառագզելի մէջ բանտար-
կուած դաղաւնի մը պէս:

— Բանի՞ տարի է որ պաշտօն կը վա-
րէք:

— Տարի մը:

— Տարի մը:

— Այո:

— Որչա՞ր է ձեր հարստութիւնը. ճիշտ
է որ 100000 ոսկի հնչուն դարձ, 60000
ոսկի Գուշայի փոխի և 100000 ոսկի
չէք մը գտնուած է ձեր տունը և 80000
ոսկինոց մէկ քանի կաշառածներ ունիք
եղեր:

— Ատ մէկ մասն է դեռ. հաղարարոր
ոսկիներու կաշառքներ կան զորս մէկ
քանի օրէն պիտի առնէի, բայց աւաղ...

— Ըսել է մէկ տարւան մէջ մօտաւո-
րապէս միլիոն մը գողցած էք. եւ եթէ,
Տէր մի՛ արասցէ, քանի մը տարի ևս
պաշտօն վարէիք...

— Բաւնէկին կ'անցնէի...

Մոլային նախարարը, այս ծովու գա-
ղանը, յանկարծ ուռնում մը արձակեց, ո-
րովհետեւ մուկերը համբերութիւններն հա-

տած՝ յարձակումի նշանը տուած եւ չորս
կողմէն պաշարած էին երեք աւաղակները,
որոնք դալկահար դէմքով, պատուած հա-
գուստներով և բանտին՝ շապլը ջուրը
խմելով փորհարութեան ենթարկուած...
վրաս յարձակել կը փորձէին՝ երբ յան-
կարծակի վանդակներէն դուրս նետեցի
ինքզինքն ու շունչս առի Մաղիկի խըմ-
բագրատունը... որ պալատ մըն է այդ
բանտին քով:

Գ.ԱՐԳՈՒՐԱՆՍՆ

րաւոր դրամները ո՛ր պահած ըլլալը եւ
րեւան հանելու համար:

Վանքեան Սրբազանին՝ Խաթուղցի
աղքատներուն ոսկիները կողորդէն անա-
ղարտ դուրս հանելու համար:

Գրիգոր Մարգարեանին՝ թոյակներէն
մնացած խոշոր գումարները աղքատներուն
մէջ չփնտրու համար:

Եղնիկ Վրդ. Պապեանին՝ Ինկիլիզ-
թուղիով խառն հինոս եաղի, որպէս զի
լաւ մը պարպուի փորը, ուր ամէն աչքէ
հեռու պահուած են Տրապիզոնի կեղեքեալ
խեղճ ժողովուրդին փարաները:

Թահսին, Ղալիպ, Մէմուհ, Բէշիտ,
Հ. Րամի, Իզդէթ, Նէճիպ, Սէլիմ, Բիզա
փաշաներու, Մէհմետ Ալիի, Շէֆիք փա-
շայի՝ որոնք եթէ մէկ մը փախել սկսին,
միլիոններ պիտի փսխեն:

Զօրաւոր բիւռկաթիֆ մը բոլոր լըր-
տաններուն, որոնց փորը և Հայերուն գըր-
պանը միշտ իրարու հետ կը չիթթուէին:

Դուռագրուի աղքատներուն նախ-
կին գործակատար Նիկողոս աղայի, որ
50—60 ոսկի անցուց կողորդը և քանի մը
չարաթ անցնելէն վերջ շուկային մէջ խա-
նութ մը բացաւ... պատուաւորապէս:

Բիւռկաթիֆ տալու է վերջապէս Բե-
րայի եկեղեցիին անանուն պաշտօնեայ
Տիար Գ. Պարտիզպանեանի և ուշադրու-
թիւն ընելու է որ եթէ առաջինը չներ-
գործէ, քիչ մը աւելի զօրաւոր արուի:

Բիւռկաթիֆ տալու է Անատոլիոյ եր-
կաթուղիի անօրէններուն:

Լուծողական մը տալու է Հիւանդա-
նոցի անօրէնին:

Լուծողական տալու է Մագսուտ Խիւ-
տալէրտեանին և քիչ մը չո՛ւտ:

Լուծողական տալու է Դատաստանա-
կան Խորհուրդին մէկ քանի անդամներուն:

Լուծողական տալու է բոլոր գոյն չու-
նեցողներուն, որպէս զի դուրս տան ի-
րենց գոյնը:

Վերջապէ՛ս ամենաստուիկ զօրու-
թիւնով և վայրկեանական ներգործող լուծո-
ղական մը տալու է... այն պանքային,
որուն դրամարկղերուն մէջ ի պահ դրուած
է Օրմանեանի անձնական հսկայ հարս-
տութիւնը:

ՀԻՆԵՆՍՏԻ ԵԱՆՈՍ

ԵՒ ՍԱՏՈՒԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՂԱՔԻՍ

ԵՐԳԻՐ ԵՒ ՍԱԼԻՐ

«ԱՌԱՂ ՓԱՆԱՅՍ ԱՆՑԱՆՈՐԻ»

(Հետեւողութեամբ ՀԱՄԱԳՈՏՈՒՄԻՆ)

Մէկ երկու շաբաթներէ ի վեր լրա-
գրաց մէջ ինձ նկատուած եղած կարգ մը
իրաւացի և բոլորովին անհերքելի զըր-
պարտութեանց... առթիւ կուգամ թէ և
յանպատրաստից ըսել մի քանի խօսք առ
ի բուժումն գայթակղեալ մօտայ, ի հանգս-
տութիւն՝ երած և ուռած սրտիս և յան-
գործութիւն պարարեալ եւ զառամեալ
մարմնոյս:

Այն երանելի օրէն ի վեր յորում յա-
ջողեցայ շնորհիւ մեղապարտ ջանացս և
անձնուէր հազկատակներու աշաւորջ խը-
նամոց՝ բարձրանալ ի գահն Պատրիարքու-
թեան, առաջին նուիրական հոգս և մը-
տածումս եղաւ կեդրոնացնել իմ վրաս
թէ՛ Ազգային և թէ՛ Կրօնական ժողովոց
իրաւասութիւնները, և վերապէս հնար
եղածին չափ խախտել սիրեցեալ... Հայ
ազգիս այն ամեն արդար պահանջները
որոնք իմ նախորդներուն, Ներսէսներու՝

